

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ԶԱՆԳԵԶՈՒՐ» ԿԵՆՍՈՒՆՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊԵՏԱԿԱՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Զանգեզուր» կենտրոնային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող բնապահպանական, գիտահետազոտական կազմակերպություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» և «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ օրենքների, սույն կանոնադրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

2. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր):

3. Կազմակերպության կանոնադրությունը դրա հիմնադիր փաստաթուղթն է:

4. Կազմակերպությունն ապահովում է «Արևիկ» ազգային պարկի, «Շիկահող» պետական արգելոցի, «Մոսու պուրակ», «Զանգեզուր», «Բողաքար», «Խուստուփ» և «Սև լիճ» պետական արգելավայրերի կանոնադրություններով ամրագրված պահանջների կատարումը:

5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն, ռուսերեն ու անգլերեն անվանումներով կլոր կնիք, դրոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

6. Կազմակերպության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ «Зангезур» биосферный комплекс» Государственная некоммерческая организация .

4) ռուսերեն կրճատ՝ «Зангезур» биосферный комплекс » ГНКО.

5) անգլերեն լրիվ՝ «Zangezur» Biosphere Complex» State Non-Commercial Organization.

6) անգլերեն կրճատ՝ «Zangezur» Biosphere Complex » SNCO:

7. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, գ. Շիկահող:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ,
ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՏԵՍԱԿՆԵՐԸ

8. «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և նպատակը «Արևիկ» ազգային պարկի, «Շիկահող» պետական արգելոցի, «Սոսու պուրակ», «Զանգեզուր», «Խուստուփ», «Բողաքար» և «Սև լիճ» պետական արգելավայրերի տարածքների բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, հաշվառման,

գույքագրման, դիտանցի, բնության տարեգրության վարման ապահովումը, ինչպես նաև ազգային պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է: Այդ նպատակով կազմակերպությունը՝

1) ապահովում է ազգային պարկի, արգելոցի և արգելավայրերի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանությունը, կազմակերպում և իրականացնում է դրանց գիտական ուսումնասիրությունը.

2) կազմակերպում և իրականացնում է բնական էկոհամակարգերի ու դրանց առանձին բաղադրիչների, բուսական և կենդանական աշխարհի հաշվառումն ու նախապատրաստում կադաստրի վարման համար անհրաժեշտ նյութերը.

3) իրականացնում է էկոլոգիական դիտանց, վարում բնության տարեգրությունը և կազմակերպում բնության թանգարանի գործունեությունը: Թանգարանում պահպանվում ու ցուցադրվում են արգելոցի, ազգային պարկի ու արգելավայրերի և Հայաստանի Հանրապետության Մյունիքի մարզի էկոհամակարգերի ու դրանց տարրերի վերաբերյալ ցուցանմուշներ, հավաքածուներ և տեղեկատվություն.

4) կանխարգելում է մարդու գործունեության հետևանքով արգելոցի, արգելավայրերի և ազգային պարկի բնական էկոհամակարգի հավասարակշռությունը խախտող գործընթացները և «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում իրականացնում խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումներ.

5) կազմակերպում է գիտաճանաչողական զբոսաշրջություն (այդ թվում՝ էկոզբոսաշրջություն).

6) սահմանված կարգով իրականացնում է հրդեհային անվտանգության միջոցառումներ.

7) ապահովում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից արգելոցի, արգելավայրերի և ազգային պարկի կանոնադրություններով սահմանված դրույթների կատարումը.

8) իր իրավասության սահմաններում իրականացնում է բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության միջոցառումներ.

9) ծրագրում և կազմակերպում է գիտահետազոտական աշխատանքներ.

10) անդամակցում է միջազգային բնապահպանական կազմակերպություններին, մասնակցում միջազգային բնապահպանական ծրագրերին.

11) պատրաստում ու հրատարակում է գիտական և գիտաճանաչողական գրականություն ու տեղեկատվական նյութեր.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

9. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) գիտաճանաչողական զբոսաշրջության, այդ թվում՝ էկոզբոսաշրջության կազմակերպում.

2) գիտական և գիտաճանաչողական գրականության և տեղեկատվական նյութերի պատրաստում ու հրատարակում.

3) բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության համար նախադրյալների ապահովում.

4) էկոլոգիական և գիտաճանաչողական զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում.

5) գովազդի կազմակերպում.

6) տեղեկատվության տրամադրում և խորհրդատվություն.

7) կենսատեսուրսների, այդ թվում՝ բույսերի և կենդանիների տեսակների, անտառային ռեսուրսների վերարտադրություն, օգտագործում և իրացում.

8) բնավայտի, այդ թվում՝ երկրորդական անտառանյութի (կոճղերի) մթերում, վերամշակում և իրացում.

9) կողմնակի անտառօգտագործում (խոտհունձ, անասունների արածեցում, փեթակների և մեղվանոցների տեղադրում, վայրի պտղի, ընկույզի, սնկի, հատապտղի, դեղաբույսերի ու տեխնիկական հումքի հավաքում) և դրա արդյունքում մթերված կենսապաշարների վերամշակում ու իրացում.

10) գյուղատնտեսական մթերքների արտադրություն, վերամշակում և իրացում.

11) հանգստի և ճանաչողական զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում.

12) անշարժ և շարժական գույքի՝ վարձույթով ժամանակավոր օգտագործման տրամադրում.

13) հուշանվերների արտադրություն և ցուցահանդես-վաճառքների կազմակերպում:

10. Կազմակերպությունը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ

11. Կազմակերպությունն ունի 7 մասնաճյուղ՝

- 1) «Շիկահող» պետական արգելոց.
- 2) «Մոսու պուրակ» պետական արգելավայր.
- 3) «Զանգեզուր» պետական արգելավայր.
- 4) «Սև լիճ» պետական արգելավայր.
- 5) «Արևիկ» ազգային պարկ.

6) «Բողաքար» պետական արգելավայր.

7) «Խուստուփ» պետական արգելավայր:

12. Կազմակերպության մասնաճյուղերն օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման՝ իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, դրա լիազորված պետական մարմինը, կոլեգիալ կառավարման մարմինը (այսուհետ՝ Խորհուրդ) և գործադիր մարմինը՝ տնօրենը:

14. Կազմակերպության հիմնադիրն ունի դրա գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնականապես լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

15. Հիմնադրի լիազորությունները սահմանվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

16 Խորհուրդը կազմված է հինգ անդամից, որոնցից մեկն ընտրվում է կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից: Խորհրդի անհատական կազմը հաստատվում է լիազորված պետական մարմնի կողմից:

17. Պետական լիազորված մարմնի լիազորություններն են՝

1) կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների՝ սահմանված կարգով ստեղծումը.

2) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

3) կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

4) կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը.

5) կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանների, հրահանգների, կարգադրությունների ու ցուցումների կասեցումը կամ դրանք ուժը կորցրած ճանաչելը.

6) կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները լսելը և դրա գործունեության վերստուգման արդյունքները քննարկելը.

7) կազմակերպության ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության իրականացումը.

8) կազմակերպության տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը.

9) կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

10) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործառույթների իրականացումը.

11) պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը:

18. Խորհրդի լիազորություններն են՝

1) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված՝ կազմակերպության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ լիազորված պետական կառավարման մարմին պետական կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

2) կազմակերպության գործադիր մարմնի նկատմամբ վերահսկողության իրականացումը.

3) հիմնադրի կողմից սահմանված կարգով կազմակերպության շահույթի տնօրինման ուղղությունների սահմանումը.

4) կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

5) իր աշխատակարգի հաստատումը.

6) սահմանված կարգով լիազորված պետական մարմին կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

7) կազմակերպության ստորաբաժանումների կանոնակարգերի, ներքին կարգապահական և այլ կանոնների հաստատումը.

8) կազմակերպության գործադիր մարմնի հաշվետվությունների հաստատումը.

9) կազմակերպության տարեկան հաշվապահական և այլ հաշվետվությունների քննարկումը.

10) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

19. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ՝ խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև լիազորված պետական մարմնի, գործադիր մարմնի կամ խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով:

20. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:

21. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ խորհրդի անդամն ունի մեկ ձայնի իրավունք:

22. Տնօրենն իրավունք ունի մասնակցելու խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

23. Կազմակերպության ընթացիկ գործունեությունը ղեկավարում է տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմինը: Կազմակերպության տնօրենն օրենքով, հիմնադրի, լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի, լիազորված պետական մարմնի կամ խորհրդի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

24. Տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրում սահմանվում են նրա իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի, կազմակերպության կառավարման այլ մարմինների հետ, նրա աշխատանքի վարձատրության պայմանները, պայմանագրի դադարման՝ օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

25. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

26. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառված վնասի

համար: Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցումը հիմք է պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

27. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված պետական մարմնի և խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

28. Տնօրենի բացակայության դեպքում, լիազորված պետական մարմնի գրավոր որոշման համաձայն, այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

29. Տնօրենի տեղակալները, մասնաճյուղերի տնօրենները պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են լիազորված պետական մարմնի կողմից՝ տնօրենի ներկայացմամբ:

30. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում դրա շահերը և կնքում գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի ու լիազորված պետական մարմնի որոշումներով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր.

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

6) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

7) սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

8) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

9) ապահովում է կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում լիազորված պետական մարմին.

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկում է միջոցներ՝ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից արգելոցի և արգելավայրերի ռեժիմների խախտման հետևանքով բնությանը պատճառված վնասը հատուցելու համար.

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման այլ մարմինների չվերապահված այլ լիազորություններ:

**V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐԳԵԼՈՑԻ ԵՎ
ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

31. Արգելոցի և արգելավայրերի պահպանությունն իրականացվում է կազմակերպության պահպանության ծառայության՝ պահպանության բաժնի և տեղամասային տեսուչների միջոցով: Պահպանության բաժնի ղեկավարն ի պաշտոնե նաև տնօրենի տեղակալն է:

32. Պահպանության ծառայության աշխատողները՝

1) ապահովում են արգելոցի և արգելավայրերի կանոնադրություններով սահմանված բնապահպանական նորմերի ու կանոնների կատարումը դրանց տարածքներում.

2) ստուգում են արգելոցի և արգելավայրերի տարածք մուտք գործող անձանց անցագրերը.

3) կանխում են արգելոցի և արգելավայրերի ռեժիմները խախտող ցանկացած գործողություն.

4) կազմում են արգելոցի և արգելավայրերի ռեժիմների խախտումների մասին արձանագրություններ, դրանք ներկայացնում տնօրենին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց ընթացք տալու համար.

5) օրենքով սահմանված դեպքերում վերցնում են արգելոցի և արգելավայրերի ռեժիմները խախտող անձանց իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող իրերն ու փաստաթղթերը.

6) ապահովում են արգելոցի և արգելավայրերի պահպանական գոտիների տարածքներում գտնվող ֆիզիկական անձանց ու կազմակերպությունների կողմից արգելոցի և արգելավայրերի կանոնադրություններով սահմանված պահանջների կատարումը:

33. Պահպանության ծառայության աշխատողն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի կրելու համազգեստ և օգտագործելու ծառայողական զենք:

34. Ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ պահպանության ծառայության աշխատողների առողջությանը և գույքին պատճառված վնասի հատուցումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

35. Կազմակերպության կողմից իրականացվող գիտական հետազոտություններն ուղղվում են արգելոցի և արգելավայրերի տարածքների էկոհամակարգերի ուսումնասիրմանը, գործընթացների և երևույթների դիտանցին, դրանց կանխատեսմանն ու գնահատ-

մանը, բուսական և կենդանական աշխարհի գենոֆոնդի պահպանմանը, էկոլոգիական վիճակի գնահատմանն ու կանխատեսմանը:

36. Գիտահետազոտական աշխատանքները կազմակերպում է կազմակերպության գիտության բաժինը, որի ղեկավարն ի պաշտոնե նաև տնօրենի տեղակալն է:

37. Կազմակերպության գիտության բաժինը՝

1) կազմակերպում և իրականացնում է արգելոցի և արգելավայրերի էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների ուսումնասիրությունը.

2) արգելոցի և արգելավայրերի տարածքներում կազմակերպում և իրականացնում է շրջակա միջավայրի դիտանցը.

3) պատրաստում և հրատարակում է գիտահետազոտական ու գիտաճանաչողական նյութեր.

4) մշակում և կատարելագործում է բնապահպանական ու բնօգտագործման մեթոդները.

5) վայրի կենդանիների և բույսերի հազվագյուտ ու անհետացող տեսակների վերարտադրության նպատակով կազմակերպում է փորձարարական և այլ գիտահետազոտական աշխատանքներ:

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

38. Կազմակերպությունն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով օգտագործում (տիրապետում) է իրեն ամրացված գույքը:

39. Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հասկացված տրանսֆերտներից և կազմակերպության կողմից միջոցառումների իրականացմանն ու տարբեր ծառայությունների մատուցման

դիմաց վճարումներից, հովանավորչական, նվիրատվական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ մուտքերից:

40. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է կազմակերպության կանոնադրական նպատակներին համապատասխան:

41. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվներ՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և (կամ) արտարժույթով:

VIII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

42. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ու կարգով:

43. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԳԱՐԻԵԼՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ԽՈՒՍՏՈՒՓ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

1. «Խուստուփ» պետական արգելավայրը (այսուհետ՝ արգելավայր) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի՝ պետական սեփականություն հանդիսացող 6946.74 հեկտար հողերի վրա և ընդգրկում է Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խուստուփ լեռնազանգվածի բարձր լեռնային հատվածը:

2. Արգելավայրի կազմակերպման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խուստուփ լեռնազանգվածի անտառային գոտու վերին հատվածի, մարգագետնատափաստանային և մարգագետնային բնական էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության հուշարձանների, բնության ժառանգության պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, ինչպես նաև բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է:

II. ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Արգելավայրի հիմնական խնդիրներն են՝

1) արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովումը և պահպանությունը.

2) վայրի բուսատեսակների և կենդանիների բնական միջավայրի պահպանությունը.

3) Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խուստուփ լեռնազանգվածի բարձր լեռնային հատվածի վտանգված, կրիտիկական վիճակում գտնվող, խոցելի, անհետացման եզրին գտնվող, ինչպես նաև Հայաստանի կարմիր գրքում ընդգրկված բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.

4) գիտաճանաչողական և էկոլոգիական զբոսաշրջության իրականացման նախադրյալների ստեղծումը.

5) էկոլոգիական մոնիթորինգի կազմակերպման, բնության տարեգրության վարման և տարածաշրջանի բնության թանգարանի կազմակերպման համար բազայի ապահովումը.

6) բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության համար համապատասխան նախադրյալների ապահովումը:

III. ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՌԵԺԻՄԸ

4. Արգելավայրի տարածքում արգելվում են՝

1) բույսերի և կենդանիների նոր տեսակների, ինչպես նաև կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված՝ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (տեսակների) ներմուծման և կլիմայավարժեցման աշխատանքները.

2) որսորդությունը.

3) թունաքիմիկատների օգտագործումը՝ բույսերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը.

4) էկոլոգիապես վնասակար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և կեղտաջրեր առաջացնող տեխնոլոգիաների օգտագործումը.

5) ուղիուակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը և պահեստավորումը.

6) հողային ծածկույթի խախտմամբ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները, օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը.

7) անտառահատումները (քացառությամբ սանիտարական և խնամքի հատումների).

8) ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունն ու կանգառը՝ ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում.

9) տնտեսական և բնակելի օբյեկտների շինարարությունն ու շահագործումը, ճանապարհների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի և այլ հաղորդակցողիների շինարարությունը (քացառությամբ արգելավայրի գործունեության համար անհրաժեշտ օբյեկտների՝ գրասենյակ, տնակ և այլն).

10) այլ ցանկացած գործունեություն, որը խախտում է արգելավայրի էկոհամակարգերի կայունությունը կամ սպառնում է հատուկ պահպանության կարիք ունեցող էկոհամակարգերի, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը:

5. Օրենքով սահմանված կարգով թույլատրվում է արգելավայրի տարածքում իրականացնել՝

1) հերթափոխային արածեցում.

2) խոտհունձ.

3) ուտելի և դեղաբույսերի հավաք (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցվածների)։

4) էկոհամակարգին բնորոշ հազվագյուտ և արժեքավոր վայրի բույսերի և կենդանիների վերարտադրություն։

5) էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող երևույթներն ու գործընթացները կանխարգելող, ինչպես նաև խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումներ։

6) էկոլոգիական զբոսաշրջության կազմակերպում։

7) էկոզբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների կազմակերպում։

8) օրգանական պարարտանյութերի և բուսական ու կենդանական տեսակների վնասատուների և հիվանդությունների դեմ կենսաբանական ծագում ունեցող պայքարի միջոցների օգտագործում։

9) ուսումնական հաստատությունների կրթադաստիարակչական և ուսումնասիրտադրական պրակտիկաների անցկացում։

10) գիտահետազոտական ուսումնասիրություններ։

11) ռեկրեացիայի նպատակով հողերի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալության տրամադրում։

6. Արգելավայրի տարածքում բնապահպանական և բնօգտագործման ռեժիմների պահպանության նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է պետական լիազորված մարմինը՝ «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։

7. Բնապահպանական ռեժիմները և բնօգտագործման թույլատրելի ձևերը խախտող կազմակերպություններն ու քաղաքացիները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

IV. ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏԻՆ

8. Արգելավայրի վրա բացասական ներգործություն ունեցող տնտեսական գործունեությունը սահմանափակելու կամ արգելելու նպատակով 300 մետր լայնությամբ շրջագծով տարածքը սահմանվում է որպես պահպանման գոտի:

V. ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏՈՒ ՌԵԺԻՄԸ

9. Արգելավայրի պահպանման գոտու տարածքում արգելվում է տնտեսական գործունեություն, որը կարող է ապառնալ այդ տարածքների էկոհամակարգերի կայունությանը, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը:

10. Արգելավայրի պահպանման գոտու տարածքում ընդգրկված սեփականաշնորհված հողամասերի օգտագործումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

VI. ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

11. Արգելավայրի պահպանությունն իրականացնում է «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված N 3
 ՀՀ կառավարության 2013 թվականի
 դեկտեմբերի 19-ի N 1465 - Ն որոշման

Հ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Փ

«ԽՈՒՍՏՈՒՓ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐՆԱԽԱՐԱՐ
 Վ. ԳԱՐԻԻԵԼՅԱՆ

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

«ԽՈՒՍՏՈՒՓ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

<<Խուստուփ>> պետական արգելավայր և Գեղանուշի գյուղական համայնքի <<Ա>> հանգուցային սահմանակետից սահմանագիծը, ջրբաժանով բարձրանում է հյուսիս-արևելք 2907.7 մ նիշ ունեցող բարձունքի գագաթով ուղղվում է դեպի հյուսիս 2887.7 մ նիշ ունեցող գագաթը թեքվում դեպի հյուսիս-արևելք անցնում 1177.54 մ հասնում լանջի վրա գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք լեռնագագաթով ջրբաժաններով անցնում 1772.94 մ հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է հյուսիս, ապա հյուսիս-արևմուտք հատելով 2626.1 մ նիշ ունեցող գագաթը, այնուհետև հատելով ձորերը, անցնում է 788.94 մ հասնում է լանջի վրա գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք լանջերով իջնում հատում է ձորերը, անցնելով 876.76 մ հասնում է ձորի սկզբին գտնվող թիվ 4 սահմանակետին, որտեղից ջրով իջնում է դեպի հյուսիս-արևմուտք անցնելով 530.7 մ հասնում ձորերի հատման տեղում գտնվող թիվ 5 սահմանակետին: Այդտեղից նույն ուղղությամբ ձորով անցնում 555.87 մ հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք անցնում 307.96 մ հասնում է ջրբաժանի վրա գտնվող թիվ 7 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս անցնելով լանջով 125.40 մ, բարձրանում և հասնում է ջրբաժանի վրա գտնվող թիվ 8 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8611140.7511$, $x=4341266.2176$): Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք ջրբաժանով անցնում 136.09 մ հասնում թիվ 9 սահմանակետին, կտրուկ սուր անկյան տակ թեքվում է դեպի հյուսիս-արևելք լանջերով հատում ձորը անցնում 437.25 մ, հասնում մյուս լանջի վրա գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ ջրբաժանով հատելով ձորը լանջով անցնելով 315.43 մ հասնում է ձորի մեջ գտնվող թիվ 11 սահմանակետին: Այդտեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, ապա

արևելք անցնում 217.68 մ հասնում է լանջի վրա գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, հյուսիս, հյուսիս-արևմուտք, լանջով և ջրբաժանով անցնում 433.37 մ հասնում ձորի վրա գտնվող թիվ 13 սահմանակետին: Այդտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատելով ձորը, անցնում 233.01 մ բարձրանում է լանջի վրա գտնվող թիվ 14 սահմանակետը: Որտեղից սահմանագիծը թեքվում է արևմուտք, հյուսիս-արևմուտք լանջով անցնելով 161.05 մ հասնում է թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք լանջով թիվ 16 սահմանակետով անցնելով 181.92 մ հասնում է ձորի մեջ գտնվող թիվ 17 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8611291.1196$, $x=4342245.2177$): Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք անցնելով թիվ 18 սահմանակետը 149.71 մ հասնում է թիվ 19 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք թիվ 20 սահմանակետով, այնուհետև թեքվում դեպի հյուսիս-արևմուտք թիվ 21-22 սահմանակետերով անցնելով 165.44 մ հասնում լանջի վրա գտնվող թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք թիվ 24 սահմանակետով թեքվում հարավ-արևելք անցնելով 150.81 մ հատելով ձորը բարձրանում լանջի վրա գտնվող թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը հատելով ձորը, թեքվում է հյուսիս թիվ 26 սահմանակետով, ապա թեքվում հյուսիս-արևմուտք լանջով անցնելով 694.62 մ հասնում է թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք ջրբաժաններով հատելով ձորերը, անցնելով 1231.50 մ հասնում է թիվ 28 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8612503.8095$, $x=4343457.5158$): Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք լանջով անցնելով թիվ 29 սահմանակետը իջնում և հատում է ձորը, բարձրանում, լանջերով հատելով ձորերը անցնում 4457.75 մ հասնում ճանապարհի թեքման անկյունում գտնվող թիվ 30 սահմանակետին: Այդտեղից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, հատելով ձորերը անցնում 1031.20 մ հասնում է լանջի վրա գտնվող թիվ 31 սահմանակետին, որտեղից կտրուկ թեքվում է հարավ-արևմուտք, լանջերով, հատելով ձորերը հասնում ժայռին, թեքվում հարավ նորից հատելով ձորերը անցնելով 1370.13 մ հասնում է ձորի մեջ գտնվող թիվ 32 սահմանակետին, որից հետո թեքվում հարավ-արևելք լանջերով հատելով ձորերը անցնելով 883.82 մ հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 33 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8615926.2087$, $x=4338054.9396$): Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հյուսիս-արևելք, նորից

հարավ-արևելք անցնելով 759.56 մ հասնում ձորի մեջ գտնվող թիվ 34 սահմանակետին, հետո թեքվելով արևելք լանջերով հատում ձորերը և դաշտային ճանապարհները, թեքվում է դեպի հյուսիս-արևելք նորից հատելով ձորերը թիվ 35 սահմանակետը նույն ուղղությամբ անցնելով 3927.25 մ հասնում թիվ 36 սահմանակետին, կտրուկ թեքվելով դեպի հարավ-արևմուտք լանջով անցնելով 1777.82 մ հասնում է ձորի մոտ գտնվող թիվ 37 սահմանակետին: Այդտեղից թեքվում դեպի հարավ-արևելք բարձրանալով խոտհարքի եզրը, անցնելով 335.46 մ հասնում գագաթի մոտ գտնվող 1583.5 մ նիշ ունեցող թիվ 38 սահմանակետին: Այդտեղից սահմանագիծը իջնում է հարավ լանջերով հատելով ճանապարհը անցնելով 984.94 մ հատելով ձորը հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 39 սահմանակետին: Այդտեղից թեքվում դեպի հարավ-արևմուտք լանջերով հատելով ձորերը, անցնելով թիվ 40-41 սահմանակետերով բարձրանալով 2031.1 մ նիշ ունեցող գագաթը նույն ուղղությամբ անցնելով 2407.73 մ հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող <<Բ>> հանգուցային սահմանակետին:

<<Ա-Բ>> սահմանագծի ընդհանուր երկարությունը 28579.63 մ է:

<<Խուստուփ>> պետական արգելավայր և Ճակատենի գյուղական համայնքի <<Բ>> հանգուցային սահմանակետից սահմանագիծը, որի կոորդինատներն են՝ ($y=8618246.1700$, $x=4335179.0829$), իջնում է դեպի հարավ-արևելք հատելով արտադրական մաս մտնող դաշտային ճանապարհը, անցնելով լանջի վրա գտնվող թիվ 1 սահմանակետը, թեքվում է արևելք, հարավ-արևելք, հյուսիս-արևելք, այնուհետև արևելք, նորից հարավ-արևելք լանջերով հատում ձորերը անցնելով 1840.35 մ հասնում լանջի վրա գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, այնուհետև հարավ-արևելք, հյուսիս, լանջերով հատում ձորերը անցնում 794.86 մ հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվում արևելք, հյուսիս-արևելք ջրբաժաններով իջնում և հատում ձորերը, անցնում 1742.72 մ հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից թեքվում է հարավ-արևելք ջրբաժանով հատում ձորը, թեքվում դեպի հարավ-արևմուտք և ձորով հասնում երկու ձորերի հատման տեղը, թեքվում դեպի հարավ և հարավ-արևելք նույն ձորով հատելով թիվ 5-6 սահմանակետերը, անցնելով 4521.04 մ հասնում է երկու ձորերի հատման տեղում գտնվող թիվ 7 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8621801.0004$, $x=4331508.0193$): Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ ջրբաժանով անցնում 662.18 մ հասնում է դաշտային ճանապարհի մոտ

գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք ամբողջությամբ անցնելով անտառի եզրով տարբեր ուղղություններով հատելով թիվ 9-48 սահմանակետերը, այնուհետև հատելով 2030.7 մ նիշ ունեցող թիվ 49 սահմանակետը անցնելով 15282.56 մ հասնում է <<Գ>> հանգուցային սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8617605.4455$, $x=4334780.8182$):

<<Բ-Գ>> սահմանագծի ընդհանուր երկարությունը 24843.71 մ է:

<<Խուստուփ>> պետական արգելավայրի և Գեղանուշի գյուղական համայնքի <<Գ>> հանգուցային սահմանակետից, որի կոորդինատներն են՝ ($y=8617605.4455$, $x=4334780.8182$) սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք և ձորակով անցնելով 380.54 մ հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև նույն ուղղությամբ հատելով 2400.7 մ նիշ ունեցող բարձունքը, թեքվում է հարավ-արևմուտք անցնելով 449.98 մ հասնում է թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը հատում է 2353.1 մ նիշ ունեցող բարձունքը թեքվում հարավ-արևմուտք և ձորի միջով հատելով 2412.3 մ նիշ ունեցող բարձունքը անցնելով 697.57 մ հասնում է թիվ 3 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8616168.8537$, $x=4334768.2841$), այնուհետև թեքվելով հյուսիս-արևմուտք, հարավ-արևմուտք հատելով 2776.7 մ նիշ ունեցող բարձունքը, ժայռերի մոտով անցնելով 628.63 մ հասնում է թիվ 4 սահմանակետին: Այդտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք հատում է 2909.3 մ նիշ ունեցող բարձունքը, նորից թեքվելով հարավ-արևմուտք հասնում է <<Խուստուպ>> լեռան գագաթին, նորից նույն ուղղությամբ թեքվելով հատում է 3115.2 մ նիշ ունեցող բարձունքը անցնելով 885.78 մ հասնում է դաշտային ճանապարհների խաչմերուկում գտնվող թիվ 5 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8614977.0776$, $x=4334142.2589$): Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը կտրուկ փոխում է ուղղությունը դեպի հյուսիս-արևմուտք դաշտային ճանապարհի ուղղությամբ 2952.8 մ նիշ ունեցող բարձունքի մոտից թեքվում է դեպի հյուսիս, անցնելով 945.13 մ հասնում է ձորի սկզբնամասում գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք դաշտային ճանապարհով անցնելով 641.55 մ հատում է թիվ 7 սահմանակետը, թեքվում է դեպի հյուսիս, այնուհետև հյուսիս-արևմուտք դաշտային ճանապարհի ուղղությամբ անցնելով 6983.94 մ հասնում է <<Ղ>> հանգուցային սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8614194.9220$, $x=4336246.3321$):

<<Գ-Ղ>> սահմանագծի ընդհանուր երկարությունը 5323.11 մ է:

<<Խուստուփ>> պետական արգելավայրի և Լեռնաձորի գյուղական համայնքի <<Դ>> հանգուցային սահմանակետից, որի կոորդինատներն են՝ ($y=8614194.9220$, $x=4336246.3321$) սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք անցնելով 102.90 մ հասնում է ջրբաժանի վրա գտնվող 2688.9 մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող թիվ 1 սահմանակետին: Այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք դաշտային ճանապարհին զուգահեռ անցնելով 236.41 մ հասնում է թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք դաշտային ճանապարհով անցնելով 156.97 մ հասնում է ձորի մեջ գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք դաշտային ճանապարհով անցնելով 390.33 մ հասնում է թիվ 4 սահմանակետին: Այդտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, այնուհետև հյուսիս դաշտային ճանապարհին զուգահեռ անցնելով 678.09 մ հասնում է թիվ 5 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8613328.0745$, $x=4336153.7253$): Այնուհետև կտրուկ թեքվում է հարավ-արևմուտք, նորից դաշտային ճանապարհին զուգահեռ անցնելով 646.12 մ հասնում է 2415.7 մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, այնուհետև դեպի հարավ-արևմուտք նորից դեպի հյուսիս-արևմուտք անցնելով 1299.21 մ հասնում է ձորի մեջ գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ հատում է դեպի հարավ-արևելք անցնում 391.88 մ հասնում է ձորի մեջ գտնվող թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, հարավ-արևմուտք հասնում է միջև 2265.9 մ նիշ ունեցող սահմանակետին, թեքվում է դեպի հարավ-արևելք անցնելով 1040.38 մ հասնում է ձորի մեջ գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ հատում է 2580.1 մ նիշ ունեցող բարձունքը թեքվում է դեպի հարավ-արևելք հատելով ձորը հասնում է 2838.4 մ նիշ ունեցող բարձունք և նորից թեքվում է դեպի հարավ-արևմուտք անցնելով 933.13 մ հասնում է դաշտային ճանապարհի մոտ գտնվող <<Ե>> հանգուցային սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8611810.4679$, $x=4333125.0882$):

<<Դ-Ե>> սահմանագծի ընդհանուր երկարությունը 5875.41 մ է:

<<Խուստուփ>> պետական արգելավայր և Ծավի գյուղական համայնքի հանգուցային <<Ե>> սահմանակետից, որի կոորդինատներն են՝ ($y=8611810.4679$, $x=4333125.0882$) սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք ջրբաժանով

